



Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն



ՃԱՄԲՈՐԳԵԼՈՒ ՄՈԼՈՒԹԻՒՆԸ

(Շար. Տես Բազմ. էջ 213)

Բ. Ա. ԲԱՐՈՒԱՇ

ՃԱՄԲՈՐԳՈՒԹԻՒՆԸ

Տիրի կեդրոնական պանդոկը. — Երասայու. բեան արած մը. — Կողմնակի դռներ՝ որոնք այլևայլ սեղանատանց կը տանէին: Մէյտեղ սեղան մը՝ ողուն վրայ պնակներ, շիշեր, և սա. կոս մը՝ խմորեղէններով լի:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԲՈՆԱՐԳԵՆ՝ յետոյ ՊԵՏՐՈՍ

Բոնարդէն (կանչելով). — Պետրոս... Պետրոս... ո՞վ Աստուած. այս ծառան ինչ դանդաղ է, և այսօր ալ այնչափ զործ ունինք, (կանչելով) Պետրոս... (Պետրոս կը մտնէ, շատ մը պընակներ բերելով):

Պետրոս. — Ահաւսիկ եմ Պ. Բոնարդէն: Բոնարդէն. — Ո՛ր էիր մինչև հիմա. չեմ գիտեր որ այսօր շատ է զործերնիս... Երբեք այսչափ մարդ տեսած էր Կեդրոնական Պանդոկը:

Պետրոս. — Այն նաւաստիներն ալ միշտ բան մը ուզելու ետե՛ն են:

Բոնարդէն. — Շուտ տղաս. սպայից համար օշարակներ, խմորեղէններ. նաւաստեաց համար ալ փոնկեր:

Պետրոս. — Հրամանդ կատարեցի արդէն Պ. Բոնարդէն:

Բոնարդէն. — Ահ, ապրիս տղաս. ճիշդ ժամանակին եկար քաղաքի՝ քիչ մը ինծի օգնելու համար:

Պետրոս. — Շիտակա, ազօթք ըրէ որ պարոն Գերկուէյ ինծի մեկնելու հրամանագիր շտուաւ:

Բոնարդէն. — Հիմա որ կողմը պիտի երթաս: Պետրոս. — Դէպի Բարեգ, Նաւապետը զոր եր-

կար ժամանակէ ի վեր կը ճանչնամ, զիս հետը բերաւ Հաւրէն և կը դրէի Բարեգ՝ երկտասարդ փորագրիչի մը քով ծառայութեան, զոր կը տեսնուի թէ շատ կը սիրէ:

Բոնարդէն. — Փերկուէյ նաւապետը ազնիւ մարդ մ'է:

Պետրոս. — Անոր համար՝ ինքզինքս կրակն ալ կը ձգեմ... (աղուռի կը շտուի): Տես քովի սրահին մէջ եղող հիւրերը դեռ չեն լծացած: Բոնարդէն. — Եթէ չտեսնուին, սակայն ձայններին կը լսուի:

Պետրոս. — Հակառակ անոր որ անոնք առաւօտն ի վեր սեղանի վրայ են, մինչև հիմայ դեռ ժամանակ չունեցան ճաշելու:

Բոնարդէն. — Ես վստահութիւն չունիմ՝ այդ մարդոց վրայ:

Պետրոս. — Ամեն տեղ կերուիսովի հետ էին, և ոչ մէկ տեղ իրենց պարտքերը կը վճարէին: Բոնարդէն. — Ի՛նչ, ստոյգ կ'ըսես:

Պետրոս. — Այն աստիճանի որ Թրուիլ քաղաքին պանդոկապետը, ուր կը գտնուէին այս մարդիկ, զանգատ յայտնի է, շատ մը արծաթեղինաց զոգութեան նկատմամբ. և ուստի անութիւնն ալ կը հսկէ անոնց վրայ: (Կողմնակի մեծ աղմուկ կը շտուի): Կը լսես զո ու զոյումք. խորհուրդ կու տամ քզի չվստահիլ այդ մարդոց վրայ:

Բոնարդէն. — Ո՛հ, ահա կը փութամ անոնց հաշիւը տեսնելու. (Կիւստաւ կես գիշերով ներս կը մտնէ, ռոպը վրայ երեսպարով):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նոյններն, ԿԻՍՏԱՆ

Կիւստաւ. — Լա խորտիկ մը վերջը, սուրճը... Բոնարդէն. — Սուրճը տրուեցաւ...

Կիւստաւ. — Սուրճէն վերջը, փոնք և պապիք բոսներ:

Բոնարդէն. — Լա, շատ աղէկ: Կիւստաւ. — Ընտիր խոհանոց, Լա գինետուն,

տորճ, օդի և ծուխ... երևակայութեան շրջ-
մտիկ փայտուն հուրը... և անա կեանքը...
ժո՛ փոկն և պապիրոսներն:

Պետրոս (ենդարիտ ձայնով)։ — Ահա ստիկ, ա-
հա ստիկ... կը տրուի, (միևնիւ այս տեսա-
րանին վերջ ինքը սեղանի սպասները շրտ-
կելու, կարգի դնելու կը զբաղի)։

Բոնարդին։ — Է՛ պարոն... այդ կեանքը ու-
կինները կը լողացնէ:

Կիսատա։ — Ա՛հ, դու ես, դուն... պարոն կա-
պելպետ:

Բոնարդին (գայրացած)։ — Կապելպետ...
խելքդ գլուխդ ժողվէ. ես, տէրն եմ Կեղրո-
նական Պանդոկին որ գաւառիս մէջ ամենէն
փառաւորն է:

Կիսատա։ — Կ'որախանգիմ քեզ սիրելիս...
Բոնարդին։ — Սիրելի՛ք...

Կիսատա։ — Դերեցէք որ գոհութիւնս յայտնեմ,
երկնական և այսօրուան հաշին համար... հոն
ստուգի էր... (նիկ Վատերի բերանը կը
սանի իր գոհութիւնը քացատրելու համար)։

Բոնարդին։ — Կ'երեկ հիացել ես:

Կիսատա։ — Հիացել եմ, հիացել:

Բոնարդին։ — Հարկ է ուրեմն դրամ ալ հնչեցը-
նել:

Կիսատա (սուր փոխիւմ դպչելով)։ — Խեղկա-
տակ, անցիր... չեմ սիրեր բառախաղեր ու
յանգեր:

Բոնարդին։ — Հիմա հաշինիդ պիտի տեսնեմ
և գումարը ձեզի պիտի բերուի:

Կիսատա։ — Պապիրոսներն ու փոնջն ալ վրան
աւելցուր. ժո՛, փոնջ, պապիրոսներն:

Պետրոս։ — Ահ հիմա կու գայ: (չիլը կը
պատրաստէ: Կիսատա դուրս կ'ելնէ ջրին
տակին երգելով)։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԲՈՒԱՐԿԷ և ՊԵՏՐՈՍ (ցոյց տալով գիշատաւ)։

Պետրոս։ — Ինչ խորդախ մարդու կերպարանք
ունի... խումբին գլուխն է:

Բոնարդին։ — Ո՛չ դիր Պետրոս... վերջ տանք
ասոնց ուզածներուն:

Պետրոս։ — Մէջերին մէկը կայ, ամենէն ա-
ւելի երիտասարդ... գոր պէտք չէ միւսներուն
հետ խառնել: Արիկայ իր ընկերաց ժող՝ ա-
ւելի քաղցրաբարոյ և աւելի պատուաւոր է:

Հաւան ասդին կարծեք նաւապետը մասնա-
ւոր կերպով կը հսկէ այդ երիտասարդին վրայ:

Բոնարդին։ — Նաւապետը շատ բարեսիրտ մէկն
է... Փոյթ չէ Պետրոս, գնա, աուր անոնց
ինչ որ ուզեն և ինծի թող անոնց գործը կար-
գադրել:

Պետրոս։ — Կ'երթամ պարոն Բոնարդին (դուրս
կ'ելնէ Կիսատաին ետք դանկէ)։

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

ԲՈՒԱՐԿԷ (քայտախախտի մը կ'առնու և կը
հայտնէ) յետոյ ԱՐԿԷ

Բոնարդին։ — Ը՛ր, Ը՛ր, Ը՛ր. այս հաշիւը ծան-
րի պիտի նստի. ո՛հ, եթէ գիտնայի, բայց
մէկ մը որ ապառիկ կ'ըլլուի այս տեսակ մա-
ղոց, ուտելու, խմելու վերջը չի զար... ո՛չ,
ալ չկայ, կանխիկ վճարմամբ միայն կու
տամ... հաշիւ և պառկիլ չորս հոգւոյ հա-
մար... վաթսուներ հինգ ֆրանկ և 45 սանթիմ...
քառասունը վեց ֆրանկ և 30 սանթիմ ես...
գումարը հարկի տասնութիւն ֆրանկ և եօթա-
նասունը հինգ սանթիմ: (Անդրի կը մտնէ)։

Անդրի։ — Ե՛ս, ծո տղայ, է՛յ, այ անպիտան,
չուք պէս աներեւութացեր է:

Բոնարդին։ — Ի՛նչ կը հրամայէ մարտիկացին:
Անդրի։ — Է՛րեք պիտի ըլլայ. օդի:

Բոնարդին։ — Ամսիշապէս կը տրուի:
Անդրի։ — Է՛յ, շուտ ուրեմն, հերս անիծուի...

Է՛ք լեցուն թող ըլլայ: (դուրս կ'ելնէ)։

Բոնարդին։ — Է՛, Պետրոս... Ի՛նչ կ'ընէ այն
երիտասարդ մարդոց հետ (Պետրոս կը մտնէ),
է՛յ, փութիմ բարեկամ...

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲՈՒԱՐԿԷ, ՊԵՏՐՈՍ, յետոյ ՊԱՂՈՍ

Պետրոս (սեղանի տնօրէնի յիշելով)։ — Եթէ
լսելու ըլլայիք սա անաւաններուն քսածնե-
րը... յիշուի ճակատէս քրտինք իշաւ, մա-
գերս տեղուեցան:

Բոնարդին։ — Ահա պատրաստ է իրենց հաշի-
ւը... Ժան-Պարի նաւաստիներն օդի կ'ուզեն,
կողորդը կնոջ տեսակէն աուր անոնց:

Պետրոս։ — Ապահով եղի անկից կը տանիմ:

Բոնարդին։ — Ես պարտէզ կ'իջնեմ, յըջան
մ'ընելու: (Բոնարդին դուրս կ'ելնէ մէկ կող-
մէն, ճոյն ատեն Պաղոս դիմացի կողմէն
սաաց կու գայ, յաւաքալայ և գլխուկոր)։

Պետրոս (ցած)։ — Ի՛նչ տխուր կերպարանք ունի
սա խելք երիտասարդը, կը զթմամ վրան...

շատ չեմ բազմամ հետը խօսելու... սակայն
սիրտ չեմ ընէր... (ժո՛, ծո՛, այդպիսին կը
չուի)։ Եկայ... Եկայ (դուրս կ'ելնէ ուտելիք-
ներ ստանալ)։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՂՈՍ միմակ

Ո՛հ, Աստուած իմ, չեմ համարձակիր մտաբե-
րել այն փոյն օրերն զորս անցրիք Քարդէն
միկնելու ի վեր: Այս մասունքիւնը զիս ա-
մօթահար կ'ընէ: Ի՛նչ կոյր յամառութեամբ
այդպիսի անձանց ընկեր եղայ... Այս Կիսա-
տաւ և իր երկու արքանեակներն՝ կատարեալ

սինթորներ են: Իրենց համար չկայ նուիրա-
կան բան մը, և կը վախճմ թէ է ոչ իսկ գո-
ղութենէ պիտի խորին: Եղբայրս իրաւունք
ունի... Ո՛հ, կաստան, եթէ էս եղբայրական
սրտիդ և խրատողիդ ունիկ որած իմ լայն, պի-
տի շատիկուէի հիմայ դառն կերպով ողբալ,
այսպիսի անօրէն ընկերներու հետ մասնակ-
ցիտ, որոնց ընթացքը և կենտրոն ամեն պա-
տուաբեր զգայմանց հակառակ էրկերի: Այս
նամայնէ ազատելու համար ստիպուեցայ դի-
մել եղբորս բարի սրտին և գործովսիր բա-
րեկամութեանը: Կամակս երկէ իրեն ձեռքը
հասաւ... պիտի դրկէ՞ արդեօք խնդրած գու-
մարս: Այսօր կը սպասեմ, և եթէ այս վերջին
գոտորութիւնն ալ ընէ ինձի համար, կ'ազա-
տիմ ասոնցմէ, կը մեկնիմ, Բարիդ կը դառ-
նամ և եղբորս հետ երջանկութիւն կը վայել-
լեմ... Այո, այսպիսի ճամբորդութիւն բաւ է
ինձ... Ահա ընկերքս... Չեն գիտեր թէ ինչ
նողկանք կ'ազդեն ինձ: (Պաշտոն կ'իմկնայ
արտաքին մը վրայ և անշուշի մը կը կարծի,
երբ կ'հիստաւ, Վիկտոր և Ֆրանսուա եր-
գելով ննքս կը մտնեն):

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԻ

ՊԱՅՐՍ, ԿԻՍՏԱՆ, ՎԻՍՏՈՒ և ՖՐԱՆՍՈՒԱ

Կիստաւ. — Ուրեմն Պաշտոն, հեռու կը կենա-
սեմք, միայնութիւն կը փնտռես...:

Վիկտոր. — Դա՛ մեր ներկայ կացութեան վրայ
կը խորհի:

Ֆրանսուա. — Կացութիւնը լաւ չէ... Իցի՛ն
թէ ասկից հեռանայի:

Կիստաւ. — Այո, ինչորը ծանր է:

Ֆրանսուա. — Հատ մար:

Վիկտոր. — Է՛հ, դուք ալ ամենափոքր դժուա-
րութեանց առջև կը լքանիք: Կը յիշէ՞ք որ
Թուրքիի մէջ իմը ճարտարութիւնը մեզի ուր-
պատեց և հոս ալ, ինչպէս ուրիշ տեղիդ, կա-
րող ենք պարզապէս համեմատ վարուիլ-
կողով անցնիլ արագեւթներն և վարպետութեամբ
դէպի Տիւնիզի՞ք ձգել զմեզ:

Կիստաւ. — Այս ամենը լաւ է... բայց դի-
րին չէ օժանդակի մը պէտ սահի՛լ այս խորա-
մանկ պարոն բռնարդէնին ձեռքէն... Էս դու՛
Պաշտոն, ինչ անպիտար...:

Պաշտոն. — Էս բան մը չեմ ըսեր, բայց մտա-
ծութիւնս շատ է:

Կիստաւ. — Բո՛ւ ռուբին ինչ կը մտածես:

Վիկտոր. — Եւ սակայն պէտք է ասկից ազա-
տելու միջոցին կ'ըլլա խորհիլ:

Ֆրանսուա. — Բացէ՛ք բայց կ'ըսեմ որ, իրացը-
նէ, ես ալ կ'ուզէի ասկից հեռանալ, թէպէտ
կենտրոն հոս լաւ է և անուշաղէներն ալ քրա-
նիկ են... (տոյս կոտոր կը դիտէ, սկստնիկ
վրայէն անուշաղէն մը կ'ստանու և զրպանը կը
դնէ):

Կիստաւ. — Հաւրի մէջ Պաշտոնի թղթապա-
նակը լեցուն ըլլալով՝ բաւեց մեր ծախքը գո-

ցելու, Թուրքիի մէջ յաջողեցանք փաթուտ
տալ, բայց հոս պէտք է որ ամեն հնարագիւտ
արուեստի ք գործ դնենք: Ամէն բանէ առաջ
հարկ է գիտնալ թէ ինչ վիճակի մէջ է մեր
էկեմուսը: Պաշտոն գանձապետնիս է, կրնայ
մեզի իմացնել մեր դրամական վիճակը:
Ֆրանսուա. — Իրաւացի ի՛նչ վիճակի մէջ է
դրամապարկը:

Պաշտոն. — Գիտէ՞ք որ արդէն երկար ժամանա-
կէ հետէ արկղը դատարկ է, և որովհետեւ պաշ-
տոնը կ'ոնշնանայ, հրաժարականս կու տամ,
և ձեր ընկերութեան հետ ունեցած ո՛ր է
դաշնագրութիւն կը խզեմ:

Կիստաւ. — Դու լաւ գիտես, Պաշտոն, որ երբ
յառնէմ առիթ պաշտօնդ, պատասխանատուու-
թիւն մը ստաննեցիր, որով չես կրնար հի-
մայ վայելիական քմահաճոյքով մը անկէ
ես կենալ: Ընկերութեան գանձուն պահողը
դու ես, քեզ կ'իմկնայ բոլոր մեր ծախքերուն
հաշիւը տալ: Ուստի քեզի կը թողուք վճա-
րիլ այն թեթիւ պարտքը գոր ըրիկք այս Կե-
դրական Պանդոկիս մէջ:

Վիկտոր. — Ճիշդն այդ է, և մենք կը կծկենք...
Կիստաւ. — Կեցէ՛ք. պէտք է որ նախ հաշիւը
ներք կարգի դրուին: Երբ մեր գանձապետը
կը վերջացնէ իր գործը պարոն բռնարդէ-
նին հետ, այն ատեն ընկերութիւնն ալ իր հա-
շիւները կը տեսնէ ու կը ցորի:

Պաշտոն. — Անիմանէմ...:

Ֆրանսուա. — Է՛յ, առանց ծանր խօսքերու,
ապա կ'ընէ... (պաշտօնական ձևով):

Կիստաւ (ետ բռնելով Ֆրանսուայի թէրը). —
Է՛յ, ինչ կ'ըլլա... (Պետոյս կը մտնէ):

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԻ

Նոյնեքը. ՊԵՏՐՈՍ, յետոյ ԲՈՒՆԱՐԿԵ

Պետոյս. — Ո՛հ, ամենքդ ալ հոս էք:

Կիստաւ. — Ահա կը տեսնես...:

Պետոյս (ցոյց տալով փոքր և ժփաղկոյմ). —
Եւ փորներիդ կուշտ... քիչ մը զուարթ...:

Վիկտոր. — Այո, երջանիկ ենք...:

Ֆրանսուա. — Բաւ մ'ալ սպասեալկին համար
հանելու է: (Բռնարդէն, շատ մը պնակներ տա-
տած ննքս կը մտնէ, և Պետոյս կը փոքրոյ
գանձը ձեռքէն անձուր):

Բռնարդէն. — Վա՛շ, ուրեմն յաճախողներս
լիցիւցեր են իրենց ճաշը:

Կիստաւ. — Այո, յարգելի պանդոկապետ:

Բռնարդէն (Պետոյսին դասնալով որ դուրս
կ'իմէ). — Պետոյս գնա, տես թէ նաւատի-
ներն բանի մը պէտք ունին, յետոյ այս պա-
րոններուն սեղանը կը վերցնես: Ուրեմն առ-
դաք, հիմայ պէտք է հաշիւներ մաքրէք:

Կիստաւ. — Մեր հաշիւը՝ յարգելի պարոն,
մեզ նախատնէք ընելու համար է:

Բռնարդէն. — Ո՛չ. այլ պարզապէս պարտքեր-
նիդ վճարելու համար, սիրելի պարոնայք:

Կիստաւ. — Լաւ ուրեմն, քիչ յետոյ պիտի
վճարուի ձեզ:

Բոնարդիկն. — Խնդրեմ փութով վճարեցէ՛ք, ազ-
նիւ պարոններ. — Վիկտոր. — Մենք՝ դու երկու կամ երեք օր
հոս կը մնանք ձեր մօտ:
Ֆրանսուա. — Հոս խոհանոցը սրտնելի է է, գի-
ւերն ազնիւ, դուք համակերիլ անծնաւորու-
թիւն մ'է՛ք... շատ հանգիստ եղա հոս:
Բոնարդիկն. — Անկարելի է: Ետ այլ ես չեմ
կրնար զձեզ հոս պահել: Բոլոր պանդոկը
բռնուած է:
Կիւստաւ. — Անիծած, լաւ ուրեմն, մեր ալ
ուզածը այդ է, վճարել... մեր հայրիւր:
Բոնարդիկն (հայտնեցուցակը տալով). — Ահա,
աչք մը տուէ՛ք:
Կիւստաւ (աւելնով զայն). — Տեսնե՞ք անգամ
մը թէ պահանջդ չափազանց չէ՞:
Բոնարդիկն. — Վերջին ծայր ճշգուծիւն պա-
հուած է հոն:
Վիկտոր և Ֆրանսուա (Կիւստաւի մօտեհանալով).
— Գումար:
Կիւստաւ (յիտ բըրեւելոյ). — Շատ ճիշդ, սի-
րելի պարոն Բոնարդիկն:
Բոնարդիկն. — Այնպէս չէ՞:
Վիկտոր և Ֆրանսուա. — Գումարը, գումարը:
Կիւստաւ. — Պարոն Բոնարդիկն խիտ պա-
տուաւոր մարդ է:
Վիկտոր և Ֆրանսուա. — Գումարը, գումարը,
գումարը:
Կիւստաւ. — Չնչին բան մը, սիրելի բարե-
կամներ... 111 ֆրանք և 75 սանթիմ:
Բոնարդիկն. — Յուսամ թէ կարող էք վճարել
զայդ:
Վիկտոր. — Կարող եմ... Ինչ, կը կասկածիմ...
Ֆրանսուա. — Այո, այո ան... կարող եմ, ինչ
ընել է:
Բոնարդիկն. — Թէ այդպէս, վարդիման մը աչք
տամ խոհանոցին և զանաւ: (դուրս կ'ընեն):

ՏԵՍԻՒԼ ԻՆՆԵՐՈՐԻ

ՊԱՂՈՍ, ԿԻՍՏԱՎ, ՎԷՍՏՐ և ՖՐԱՆՍՈՒԱ

Կիւստաւ. — Հարիւր տասնութէ՛ք ֆրանք, ես-
թանասունը՛նիւզ սանթիմ... Է՛հ, դուք ի՛նչ
կ'ըսէք...
Վիկտոր. — Քիչ մը մտածել կու տայ:
Ֆրանսուա. — Ի՛նչ սարսափելի թիւ՝ 111
ֆրանք:
Կիւստաւ. — Եթե անասունը՛նիւզ սանթիմ:
Պաղոս (ցած). — Ո՛ր Տէր իմ, ինչ պիտի ըլ-
լամ ես, եթէ եղբայր ինձ օգնութեան չհաս-
նի...
Կիւստաւ. — Է՛, ուրեմն Պաղոս, այս գումա-
րը... դու ի՛նչ կ'ըսես:
Պաղոս (ազնուական ցաւամբ մը). — Այս
գումարը ձեր նախատանց ցոյցն է, որ ձեր
երեսը կը զարնուի: Առանց դրամի, և յոյս
ալ չունենալով զայն տեղէ մը ձեռք բերել՝
բայց եթէ անուանարկ միջոցով, կը համար-
ձակե՞ք այսպիսի զեղխութեանց և չապշութեանց

ենթարկուիլ: Հարէն մինչև Տիեք, ճամբուն
մէջ, առէն տեղ ձեր անամօթ խաբէրայութեան
հետքերը թողուցիւ: Ես իմ ապշութեամբ
ձեր քայլերուն հետեւելով՝ ամօթալի շղթայով
մը կաշկանդուած կը գտնեմ զիս: Թէպէտ քիչ
մը ուշ, սակայն կը տեսնեմ զահաւէ՛ծը, որ
կ'ուզէք տանիլ ձեզի գիւ: Երջանիկ եմ տա-
կաւին որ խորխորատին զառի՛վայրին վրայ
աչքերս կը բացուին. ես կ'ուրանամ զձեզ,
չեմ ճանաչար զձեզ: Հետացէ՛ք ինձմէ, դուք
զողեր էք և ես պատուաւոր մարդ... Հետը-
հակալ եմ, Աստուած իմ, որ իմ սրտիս մէջ
միշտ կենդանի պահեցի՞ր պատուդ և ուղղու-
թեան զգացումները:

Կիւստաւ. — Նորօրինակ և սքանչելի բան,
մեզի համախոհ ըլլալէ և բոլոր մեր հա-
ճոյից մասնակից ըլլալէ ետքը, հիմա անոր
հետեւեղանքերուն ենթակալ ըլլալուն համար՝
պարոնը իմաստասիրական վերաբերում կը
ծածկուի, և կ'ուզէ մեզի բարոյականութիւն
թարգել... ա՛հ, ա՛հ, ա՛հ:

Վիկտոր. — Շատ խելացի է, այս պարոնը...
Ֆրանսուա. — Ես այսպէս կը դատեմ, թողուլ
գրեքը երաշխաւոր պարտուց և փութով հե-
ռանալ ասկից:

Կիւստաւ. — Պաղոս, մեզ երեքնիս խորհուրդ
մը պիտի ընենք թէ ինչ ճամբայ ըտնելու ենք
այս ծանր պարագաներուն մէջ, յետոյ կ'ի-
մացնենք քեզի մեր որոշումը: (ցած հայնով,
իր ընկերներուն դարձած) Եւ մեք բարեկամք,
միջոց մը փնտռենք զմեզ ազատելու արագ
փախստեամբ մը այս կատաղի կապելապետին
ձեռքէն (դուրս կ'ընեն քողովով զՊաղոս
ընկերակց տխուր մտածութեանց մէջ, կրկն-
ւելով փոքր, ժուլը, գինիս հայնել):

ՏԵՍԻՒԼ ՏԱՍՆԵՐՈՐԻ

ՊԱՂՈՍ, յետոյ ԲՈՒՐՈՒՆ

Պաղոս. — Ո՛ր, թշուառականներ... կ'երթան
խորհուրդ կազմելու, փախստեան հնարք մը
գտնելու որ մի միայն կրնայ գրեթե ամօթա-
լի կալանատուրութենէ մը ազատել: (Բոնար-
դիկն կր մտնէ, կարծրելով հոն գտնել երիտաւ
սարկենը):

Բոնարդիկն. — Ա՛հ, վերջապէս եկալ... Ի՛նչ,
թաշտներս փախելի են... Բայց ահա անոնց
խուճէն մէկը... է՛յ, ո՛ր են քու բարեկամ-
ներդ...:

Պաղոս. — Ի՛մ բարեկամներս... ես՝ բարեկամ
չունիմ, պարոն:

Բոնարդիկն. — Քու ընկերակիցներդ՝ որոնց հետ
ծախսեր ըրիր:

Պաղոս. — Մի՛ շփոթեք զիս անոնց հետ... ես
զանոց չեմ ճանչնար:

Բոնարդիկն. — Ի՛նչպէս, դու զանոց չեմ ճանչ-
նար... սակայն դու ալ ծախքի մէջ քու մասդ
ունեցար:

Պաշտոն. — Կ'իմացնեմ քեզ, պարոն, որ թէ՛ պէտեւ անոնց ընկերութեան մէջ գտնուեմ եմ, բայց այն էս անոնց հետ գործ չունիմ:
Բոնարդիկն. — Այդ իմ գիտնալու բանն չէ: Ուրիշ ընելիք չունիմ, կամ այն է որ կը վճաւ ըստ ինչ, ինչ որ հոս ծախսեր եղան, և կամ ոտիկանութեան լուր կու տամ:

Պաշտոն (ցած). — Ո՛հ, Աստուած իմ, այսպիսի փորձանքի մ'ալ պիտի հանդիպէի... Բայց, եթէ կատարեմ իմանալ... խեղճ եղբայր... անտարակոյս ցաւէն կը մեռնէր. (բարձր) Պարոն...

Բոնարդիկն. — Ստակը կ'ուզեմ:
Պաշտոն (տղալատոր կերպով). — Պարոն, եթէ չնորոգ ընես սպասել քիչ մը... եղբայր...

Բոնարդիկն. — Փառորդ մ'ալ չեմ սպասեր և ոչ իսկ վարյիկան մը:

Պաշտոն. — Բայց վերջապէս կրնաս վստահուիլ թին ունենալ վրաս...:

Բոնարդիկն. — Քեւ վրազ վստահութիւն... Գեղեցիկ երաշխաւորութիւն. եթէ այն դրամն է զոր վճարեցիք ուսկից դուք անցաք, այլ ևս չեմ գարմանար որ ոտիկանութիւնը կը հսկէ ձեր վրայ:

Պաշտոն. — Պարոն, ինչ կ'ուզեմ այդ խօսքերը: Բոնարդիկն. — Այս յայտնի է որ իմ կտակիս համար չէ:

Պաշտոն. — Պարոն, ես բնաւ իսկ գործ ունեցած չեմ ոտիկանութեան հետ, և երբէք պիտի չունենամ:

Բոնարդիկն. — Կրնաս գայն Պետրոսէն տեղեկանալ. (այս վայրկեան Պետրոսն նկար կը տեսնէ և միշտ կողմէն փերկոյից նաւապետը):

ՏԵՄԻՆԱԼ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԻԿ

Նոյննոր, Պետրոս և Նաւապետ

Պետրոս. — Պարոն Բոնարդիկն, պարտիզին մէջ վեց սեղանի սպասք կը պահեսի, և յետոյ մէկ քանի խօսք ականջիս դիպաւ, որ կարծեմ մեր խումբը յայմար վայրկեանի կը սպասէ, որպէս զի փախչի երթալ:

Պաշտոն. — Ո՛վ թշուառութեան, Տէր իմ, կորստած եմ (կ'իկնկալ արտի մը վրայ, ընկրդմամբ իր ցաւը մէջ):

Բոնարդիկն. — Պետրոս, փութի ոտիկանութեան երթալ և ես հոս կը կենամ հսկելու անոնց վրայ:

Պետրոս. — Առանց պահ մը կորսնցնելու, ահա կը թռչիմ (դուրս կ'իկնկալ):

Նաւապետ (Բոնարդիկին) ցոյց տալով զՊաշտոն. — Կապել տուր միտնե՛ր: Եթէ կ'ուզես, բայց ասիկայ ինչ կը պատկանի:

Բոնարդիկն. — Պարոն Նաւապետ, և սա անոնց ընկերութենէն է:

Նաւապետ (վճարար). — Այլ ու անոնցմէ չէ: Բոնարդիկն. — Բայց, պարոն Նաւապետ, 111 ֆրանք և 75 սանթիմի ծախք կայ:

Նաւապետ. — Պատասխանատու կ'ըլլամ:

Բոնարդիկն. — Իսկ միտնե՛ր... Նաւապետ. — Միտնե՛ր... Բոնե՛լ տուր գաւառի և զատաստանը թող իր գործը տեսնէ: Բոնարդիկն. — Շատ լաւ, ես գոհ եմ... հստակ ցունցաւ, կ'երթամ հսկելու այն խորամանկ ներուն, և զգե՛ք կը թողում քու պաշտպանածիդ հետ:

ՏԵՄԻՆԱԼ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԻԿ

Նաւապետ և Պաշտոն

Պաշտոն (կընկնով արտաին վրայէն և ինքնիկն խօսելով, առանց գիտնալու որ Նաւապետն ձոն է). — Ո՛հ, դեռ երբ հնչեմ ականջիս այն դառն խօսքերը: Ես լսեցի գառնիկ... ոտիկանութիւնը կը հսկէ վրաս... ինչպիսի նաւապետանաց խորխորատի մը մէջ խորատու գուռն եմ ուրիմ... Ո՛հ, սիրտս բարկուեց թեմք թեմք: Ելաւ այն նախատանաց աղջիկը զոր մարդն ինչ ուղղեց: Բայց, սակայն գուռն իրաւունք ունի... ինչ ընել, Աստուած իմ, ինչ պիտի ըլլամ, և ինչ վերջ պիտի ունենայ այս ամենը:

Նաւապետ (յոշիկի առաջ կ'ըլլալով) ձեռքը Պաշտոնի ուսիկ վրայ կը դնէ. — Գուռն լաւագոյն՝ որուն արժանի չես դու, խեղճ Պաշտոն:

Պաշտոն (զարմանալով և ձեռքերը երկիւղ վիճակով). — Ինչպէս դու, դու, Պարոն: Նաւապետ. — Այս քեզի զարմանք կը պատճառէ:

Պաշտոն (ուրախութեան և զարմանքի միահալմամբ յայտնելով). — Ո՛հ, Աստուած իմ, Նաւապետ. — Սակայն զարմանալի չէ որ երբեք ճանապարհորդներ բազմ ունենան իրար հանդիպելու ճամբուն մէջ: Ինչպէս կը գտնես ճամբորդութիւնը:

Պաշտոն. — Ատոր վրայ խօսք մը ընել ինծի, ո՛հ, ես շատ թշուառ եմ:

Նաւապետ. — Այդքան շուտ:

Պաշտոն. — Ահա, որ եղբորս խրաններուն շանտաջի:

Նաւապետ. — Այո, դու պիտի չանիծէիր այս որ քու թշուառ բախաւ, պիտի չզարմանար զգուսնեք քու աչքերդ ամսթալի դուրսնէ մը, որուն մէջ ձգե՛ր ես զգե՛ք այսօր:

Պաշտոն. — Խեղճեմ պարոն, ոգորմէ՛ ինծի, զթուրիմ:

Նաւապետ. — Միշտ այդպիսի թշուառութեանց կը հանդիպի երիտասարդութիւնը, երբոր կը հետեի իր խեղճի, իր ընթերցումներուն և շար ընկերներուն:

Պաշտոն. — Այո, բայց ահա դու հոս ես, իմ սիրելի Նաւապետ, իմ անձկալի բարեկամս...

Նաւապետ. — Յիշատակութիւն է որ զգե՛ք հոս զդէպ:

Նաւապետ. — Յիշատակ շատ պէտք ունիիր որ այդ Նախախնամութիւնը պատշաճ ժամանակ ինչ զար քեզի օգնելու, այնպէս չէ՞ Պաշտոն:

Պաշտոն. — Եւ ես իրեն ցոյց տալու համար իմ

խորին երախտագիտութիւնս, թոյլ տուր ինձ, Նաւապետ՝ որ ձեռքդ համբուրիմ յարգանքս անոր, որ ինձ համար Նախախնամութեան ներկայացուցիչն է։

Նաւապետ. — Լաւ, կը թողում որ զայն համբուրես։

Պաշտոն. — Նաւապետ, դու շատ ազնիւ ես... Ես, տակայն, զիս արժանի չեմ համարիր... Եթէ գիտնայիր...

Նաւապետ. — Եւ ուրեմն, կոյր բախտ։ Ես աւսն բան գիտեմ, գրկէ զիս փութով (Պաշտոն տնոր ուսին վրայ կ'իկնկայ և կ'ը գրկախառն միկն)։

Պաշտոն. — Ո՛հ, երջանութիւն է այս զոր ինձ կը շնորհես... քու բարութիւնդ զիս կը վերականգնէ։

Նաւապետ. — Աբէս չհեռացուցի գրեզ Բարիզէն մեկնելէդ քի վեր։ Ետեկդ շրջեցայ բոլոր քու ընթերցարդ մէջ և կանգ առի ամեն տեղ ուր որ դու կը կենայիր։ Ամեն տեղ ճանչցայ, ստուգիւ, որ դու քու ընկերներդ ձգուած կը տարուէիր, բայց առանց սրտովդ անոնց մասնակից ըլլալու։

Պաշտոն. — Այո, բարեկամ, ստոյգ է, դու խիտ լաւ ճանչցիր ես զիս։

Նաւապետ. — Բայց այս ամէնը չի ազատեր գրեզ՝ քու ներկայ վիճակիդ վտանգէն։

Պաշտոն. — Ի՛նչ ուրեմն... ի՛նչ կայ... վախճալու ի՛նչ ունիմ։

Նաւապետ. — Քու ընկերներդ գողութեան յանցանքի մէջ բռնուեցան և դու ալ չիս կըրնար չամբաստանուիլ իբրեւ գողագին։

Պաշտոն. — Կ'ուզէի տեսնել թող գնա, կրնամ զիս պաշտպանել, և դու ինքնին Նաւապետ, հոն պիտի չ'ըլլաս զիս արգարագեղելու համար սուտ ամբաստանութեան մը դէմ։

Նաւապետ. — Անհարիրն է։ Դատարանը նախ բանտ կը դնէ գրեզ, և ապա տեղեկութիւն կ'առնու և իր դատաստանը կ'ընէ։

Պաշտոն. — Բանտ... ո՛հ, ահա կը մեռնիմ... Ի՛նչ ընել...

Նաւապետ. — Մէջ հնարք մը միայն գիտեմ։

Պաշտոն. — Չիս բոլորովին քեզ կը յանձնեմ, ի՛նչ որ ալ ըլլայ հնարք, կ'ընդունիմ զայն։

Նաւապետ (յորդոր վրէ հանկրով գրպանէն). — Ամեն բան նախատեսած էի... Կորցնցնելու վայրկեան չկայ. ահա կը հասնին ստորիան ներս. հարկ է ժամանակաւոր պայմանագրուութիւն մը ստորագրես փանձ՝ Պար նաւուն մէջ՝ իբրեւ նորավարժ նաւաստի։

Պաշտոն. — Ի՛նչպէս, ես նաւաստի. (աղտոյակներ կը շարունակէ)։

Նաւապետ. — Իզ լսե՛ս այս աղմուկները մօտէն... քու յարգելի ընկերացդ բանտարգանքութիւնը կը կատարուի։

Պաշտոն. — Եւ զիս իրենց իբրեւ ընկեր պիտի յայտենն։

Նաւապետ. — Ստորագրէ՛ և ես պատասխանաւոր եմ կ'ըլլամ ամեն բանի։

Պաշտոն (ցրիւն աւանդով). — Կ'ընդունիմ Նաւապետ. (և յետ ստորագրելու) Ո՛հ, Երկինք,

կարծես նոր կեանք մը կը սկսիմ (դարձնալ ձայնիւ կը շարունակէ)։

Նաւապետ. — Քու հին ընկերներդ ամօթապարտ կը գտնուին, իսկ քու առջեդ պատուոյ նոր ճամբայ կը բացուի։

Պաշտոն. — Ապա իմ եղբայրս կատարեմ։

Նաւապետ. — Նա քու վրայ լուր կ'առնու։

Պաշտոն. — Դեռ քոյ, որ պիտի մեկնի այսօր, իմ թողթս անոր տանելու։

Պաշտոն. — Այսուհետեւ քու հրամանիդ ներքեւ եմ։

Նաւապետ. — Դու իմ հրամանիս ներքեւ ես մինչև նաւարկութեան վերջնալը, և կ'արածեմ թէ արդէն պիտի չերկարի. (կը կանկէ) Անդրէ՛։ Պետք է սիրելի Պաշտոն որ քու նոր պաշտօնիդ զգեստն հագնիս (Անդրէ ներս կը մտնէ)։

Անդրէ. — Անասիկ եմ, Տէր Նաւապետ։

Նաւապետ. — Անդրէ՛ բարեկամ, զգեստը այս երիտասարդը, և քեզի կը յանձնեմ ասոր կըրթութիւն տալը։

Անդրէ. — Լաւ, տէր Նաւապետ. (Անդրէ դուրս կ'իկնէ Պաշտոնի հետ)։

ՏԵՍԻԼ ԵՐԵԲՏԱՍԱՆԵՐՈՐԻ

ՆԱՍԱՊԵՏՆ. յետոյ ՊԵՏՐՈՍ

Նաւապետ. — Անասիկ հետս է խեղճ Պաշտոնը։ Ի տեղեկութեամբ արտեսուր իրեն ձեռք պիտի գայ, բայց այս է միակ պատուաւոր միջոցը զիսքը կը տխուր կացութիւնէն փրկելու համար։ Յետոյ նաւարկութենէ վերջը՝ քոյքն երջանիկ պիտի ըլլամ այդ երկու երիտասարդներն ի միասին բնակեցնելով իմ սրտիս մէջ և իմ ինամոցս ներքեւ իրենց տեղ տալ, և իրենց հետ մէկ յարկի տակ ապրիլ։ Պետրոս կը մտնէ) Պետրոս, ահա նամակ մը իմ երկու տասարդ բարեկամիս համար։ Քու վարձքդ նախապէս տուեր եմ, և ի դարձիս կրկին պիտի վարձատրուիս, եթէ պարոն կատարեմ քու ծառայութեանդ համար բարի վճայութիւն տալ ինձի։

Պետրոս. — Տէր իմ Նաւապետ, դուք զիս երկար ժամանակէ քեզ կըր ճանաչաք. ձեր վստահութիւնը ունեցիր եմ միշտ, և պիտի շնամք ինձ նոր յանձնուած պաշտօնիս մէջ ալ՝ այդ վստահութեան արժանի ցուցնել զիս։

Նաւապետ. — Չեմ տարակուսիր, Պետրոս, վերստին կը յանձնեմ քեզ ուրեմն իմ երկու տասարդ բարեկամս, համարեմ թէ իմ գաւազն ըլլար։ Այս ժամն միտս բարոյ... (հեռուէն նշուռն աուցելու ձայն կը շարունակէ) Կը լսեմ ահա նաւաստիներս... անոնք միշտ երէզ կը գտնուին մեկնելու ժամուն։

Պետրոս. — Բարի ճանապարհ, տէր իմ Նաւապետ, պաշտով եղջը որ իմ իրենց ամեն տեղ անբաժան պիտի ըլլամ ձեզմէ։

Նաւապետ. — Շնորհակալ եմ, Պետրոս, (Նաւաստիք և Պաշտոն իրենց կարգին գլուխը առած կը մտնեն)։

ՏԵՍԻԼ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Դոյներն, Պարոս և ՆԱԽԱՍՏԻՔ

Պարոս. — Տէր իմ Նաւապետ, աւաւասիկ եմ ձեր հրամանին համեմատ։
 Նաւապետ (ամենուն առջև). — Որդեակ, նաւաստի կենացը խիտ է, զգիտութեամբ և վտանգներով լի, բայց անոր վարձատրութիւնն ալ փառահեղ։ Հին է յաղթութիւնը որ միշտ նեղութեանց և զրկանաց մէջ զմեզ կը մխիթարէ։ Հնազանդ եղիւր քու պետերուդ, կարգապահ, ժիր, բարի ընկեր և ամենուն համակրութիւնը կը շահիս։ (կարգի մտած՝ դուրս կ'ելնեն)։

ՏԵՍԻԼ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՊԵՏՐՈՍ. յետոյ կ'ԱՍՈՍ

Պետրոս. — Անաւասիկ մեկնեցան... Արդ, չեմ գիտեր թէ ինչո՞ւ լալս կու գայ... Ուրախ էի որչափ որ հոս էր իմ քաջ Նաւապետս, և հիմայ որ ալ պիտի չտեսնեմ, տեսուր պիտի ըլլամ... Իհ, ուրեմն կարգը իմս է ճամբայ ելնելու և վաղը առաւօտ Բարիդ կը հասնիմ... Յաճախորդ մը եկաւ... (կ'ստունն ենքս կը մտնէ, արտո մը կ'ամռնէ և կը նստի սեղաւնի մը յով)։
 կ'ստունն. — Սպասաւոր, պորտոյի բաժակ մը և մի քանի թաթխներ։
 Պետրոս. — Անմիջապէս, պարոն. (ի'երթայ ու զամբ բերելու)։
 կ'ստունն. — Անթի կ'եմ... յետոյ անհամբեր է սիրտս տեսնելու եղբայրս... Խեղճ Պարոս. եթէ ստոյգ է, ինչպէս որ ինքը զրնց, բուժուած

ըլլայ ճամբորդելու իր տխուր մոտութենէն, բոլորովին ամօթապարտ պիտի ըլլայ իմ առջևս։ Երջանիկ պիտի ըլլամ գիտքը ողջապահելու... հա դրամի պէտք ունի... Արդարեւ իրեն բերած եմ որքան որ զսայ իմ և բարեկամներուս քովը... ո՛հ, ինչ երջանկութիւն, զինքը Բարիդ պիտի տանիմ և պիտի շարունակենք նախկին օրերնուս ընկացքը։ (Պետրոս կը բերէ զինքն և քարխոցները) — կ'ստունն քարխոցներն գիշտեցի մէջ քանակով կ'ուտեմ) Բարեկամ, շատ բազմութիւն ունի՞ք հոս։
 Պետրոս. — Ահա ամենքը հիմայ դուրս ելան։ կ'ստունն. — Երիտասարդ մը ժամագիր եղած էր տեսնուելու հետս, հոս կ'եղբորսկան Պանդոկիս մէջ։

Պետրոս. — Երիտասարդ մը որ քեզի կը նմանի քիչ մը, այսինքն է... քեզմէ քիչ մը փոքր։ կ'ստունն. — Պարոս կ'ըսուի... եղբայրս է նաւ Պետրոս. — Ես չեմ գիտեր, բայց եթէ ան է, որուն վրայ կը մտածեմ, նա փերկուէյ Նաւապետին հետ Ժան-Պար նաւը գնաց։

կ'ստունն. — Այդ նաւը դեռ նաւահանգստին մէջ է։

Պետրոս. — Նաւահանգստէն հեռանալու վրայ է...

կ'ստունն. — Ո՛, Աստուած իմ, Պարոս իմ սիրելի եղբայրս... վագեմ, հասնիմ. (բարիբանիս հարուած մը կը լսուի)։

Պետրոս. — Պարոն, անգուտ է... նաւանս գիտքը սակից հեռու է, և անա լսեցիր, մեկնելու նշանը տրուեցաւ։

կ'ստունն (Արտաքի վրայ ինկնալով) Ո՛վ թշուառութեանս, ես ուշ հասայ։

ԹԻՐԿ. Հ. ՅԱՅՈՒՐ ՏԻՐՈՅԱՆՍ

ՎԷԼԻՔ ԵՐԽԻՐՈՐԴ ԱՐԱՐԱՆԱԺԻՆ

ARMENIA

Այս իտալալեզու ամսօրեայ թերթը՝ հրատարակած է Մայիս թիւը, ճոխ պարունակութեամբ, Էսկար Շահինի գեղեցիկ պատկերներով, և ընտիր յօդածներու շարքով։ Այս միակ թերթին է իտալոյ մէջ՝ որ յամառ յարատեւութեամբ, ժիր ջանքերով կը ճգնի՝ բարձր նպատակի մը համար, ծանօթացնելու իտալական ազգին՝ Հայուն մայրիրոսութիւնը, ներկայապէս կրածները, ցուցնել որ նա զուր տեղ կը չարարուի, ըմբռնել տալ որ այս ազգը մեծ հանճարներ տեսիլներ է. և աւսոր իբրեւ ապացոյց՝ կը բովանդակէ շատ մը թարգմանութիւններ մեր մեծանուն հեղինակներուն, ինքնագրութիւններ և այլն։ Այս թերթը այլ ևս մեծ ճիշդագործներ առած է իտալոյ մէջ և դուրսը. նախարարներէ և երեսփոխաններէ սկսեալ բաժանորդներ ունի։ Իմբագրութիւնը կը տպէ 3000 օրինակ, որոնցմէ 2000ը ձրի և նուէր կը զրկուին իտալական թերթերու և կարևոր բարձրաստիճան անձերու, 500ը իր բաժանորդներուն, և միւս 500ը իբրեւ պահանջ՝ զրկելու համար ուղղորդուին, որ անպակաս են։ Ամենուն կը յանձնարարենք ամենալիցին գոհողութեամբ մը բաժանորդագրուելու այս թերթին։ Տարեկան գինն է ֆր. 5 արտասահմանի համար, իսկ իտալոյ մէջ ֆր. 2,50։ Գիմուլ

Spett. Periodico « Armenia »

Corso Regina Margherita 73,

TORINO (Italia)